

# ՀԱՆԴԵՍ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՏՄՈՆՏՈՑ ՏԷ ԱՄԻՉԻՍ ԻՏԱԼԱՑԻՈՑ 1

### ԱՅԱ ՍՈՖԻԱ

Եւ հիմայ՝ թէ ճանապարհորդութեանց խեղճ մատենադիր մ'ալ կրնայ օգնութեան կոչել մուսայ մը, ես ձեռնամած կը կոչեմ զինքը, վասն զի միտքս կը զարհուրի « յանդիման ազնուական առարկային » և բիւզանդական մայրեկեղեցւոյն մեծամեծ գիծերն առջևս կը դողդողան, ինչպէս երերածուփ ջուրէ մը ցորացեալ պատկեր մը: Մուսայն յիս չնչէ, Սուրբ Սոփիա զիս լուսաւորէ և ինքնական Յուստինիանոս ինծի ներումն շնորհէ:

Հոկտեմբերի գեղեցիկ առաւօտ մը, իտալիոյ Հիւպատոսարանի տաճիկ գաւ վազի մը և յոյն թարգմանի մը հետ՝ վերջապէս գնացինք տեսնելու « գերկրաւոր արքայութիւնն, զերկրորդ հաւտատութիւնն, զկառքն քերովբէից, զաթոռ փառայն Աստուծոյ, զգարմանայիքն երկրի, զմեծագոյն տաճարն աշխարհի յետ Սրբոյն Պետրոսի »: Այս վերջին վճիռս, — զիտանս իմ Պուրկոսի, Գոլնիոյ, Մեղիոլանու և Փլորենտիոյ բարեկամքս, — իմս չէ, և չէի յանդգնէր իմն ընելու զայն. բայց այլոց հետ յիշեցի՝ վասն զի Յունաց եւ Ռանդնալից ոգիէն նուիրագործեալ շատ մը բացատրութիւններէն մէկն է, զոր ճամբան մեր թարգմանը կը կըրկնէր մեզի: Եւ խորհրդով ընտրեր էինք տաճիկ ծեր զավազի մը հետ՝ յոյն ծեր թարգման մը, յուսով որ՝ի գերեւ չեւաւ: Իրենց մեկնութեանց և իրենց ա-

ռասպելաց մէջ լսելու երկու կրօնից, երկու պատմութեանց, երկու ժողովրդոց միմեանց հետ ողորիլը. և թէ՛ մէկն եկեղեցին մեզի պիտի գովէր, միւսն մղկիթը հօշակէր, այնպէս որ ինչպէս որ պէտք էր տեսնել՝ տեսնէինք զՍուրբ Սոփիա, քրիստոնէի աչքով մը և տաճկի աչքով մը:

Մեծ էր իմ ակնկալութիւնս և վառ վրուսն հետաքրքրութիւնս. և սակայն ճամբան կը մտածէի, ինչպէս գեռ կը մտածեմ, որ չկայ հոշակաւոր յիշատակարան, թէ և արժանաւոր ըլլայ իր համբաւոյն, ուսկից այնպէս կենդանի և պարզապէս հաճոյական յուզում մը գայ առ հոգին, ինչպէս այն՝ զոր կ'իմանաս զայն երթալու տեսնելու ժամանակ: Եթէ պէտք ըլլար ինծի ժամ մը նորէն ապրելու այն ամեն օրերուն՝ յորս մեծ բան մը տեսայ, զայն կ'ընտրէի՝ որ անցաւ — երթանք — ըսած վայրկենին մէջ, և զայն՝ յորում լսեցի՝ թէ — Հասանք, շճանապարհորդութեանց գեղեցկագոյն ժամերն աւոնք են: Երթալու ատեն զօգցես կը զգաս թէ հոգիդ կը մեծնայ իբրև հիացման զգացմանը բովանդակելու, որ յետ սակաւուց պիտի ծնանի հօս. կը յիշատակուին առաջին երիտասարդութեան իղձերն, որ երազ կը կարծուէին. կը տեսնուի աշխարհագրութեան ծեր վարժապետ մը, որ յետ գծելոյ զլոստանդունուպոլիս Եւրոպայի տախտակին վրայ, յօդս կը ստուերագրէ, (պըտլունց մը քթախոտ մատանցը մէջ,)

մեծ մայրեկեղեցւոյն զիծերն . կը տեսնուի այն սենեակն, այն վառարանն, որուն դիմաց մերձաւոր ձմեռուան մէջ պիտի նկարագրէ գլխատակարանն՝ յապուշ հարեալ և անշարժ երեսաց շրջանակի մը մէջ . այն Սուրբ Սոփիայի անուանը՝ ՚ի դուլին, ՚ի սիրտն, յականջս կը լսուի հնչելը, ինչպէս կենդանի էակի մ'անունը որ մեզի սպասէ և զմեզ կանչէ մեծ գաղտնիք մը մերկանալու համար . մեր գլխոյն վրայ կը տեսնուին երևութանալ շինուածոց հրաշակառոյց կամարներ և խարիսխներ՝ որ երկնից մէջ կը կորուսին . և երբոր նպասակէն քիչ քայլ հեռու ես, անպատմելի բերկրութիւն մ'ալ կ'իմանաս կենալու նկատելու խիճ մը, մողոզի մը փախուստը տեսնելու, ծաղու բան մը պատմելու, քիչ մը ժամանակ կորսնցընելու, քանի մը վայրկեան ուշացընելու այն բոպէն որուն փափաղեցար քսան տարի և զոր պիտի յիշես բոլոր կենօք : Սոյնպէս որ այս զարմացման համբաւեալ հաճոյքներէն շատ քիչ բան կը մնայ, եթէ վերցուի այն զգացումն որ զայնս կը յառաջէ և և այն որ անոնց ետևէն կու գայ : Գրեթէ միշտ պատարնք մ'է, հետևեալ ՚ի թեթիւ մուրումեան ճանաչմանէ մը, ուստի մենք կամակորք՝ ուրիշ պատրանքներ կը բուսցընենք :

Սուրբ Սոփիա մզկիթն հին Պալատան գլխաւոր մտից դիմացն է :

Սակայն Պալատան առջև տարածուած հրապարակին մէջ հասնելէն ետքը, առաջին աչք քաշող բանը՝ մզկիթը չէ, այլ Աճմէտ Գ Սուլթանին անուանի աղբիւրն :

Տաճիկ արուեստին նորաձև և ճոխագոյն յիշատակարաններէն մէկն է : Բայց յիշատակարանէ մ'աւելի, կիճէ մեհանդ մ'է, զոր տարիածու սուլդան մ'իբ Ստամբոլին դիմաց դրաւ սիրոյ վայրկենի մը մէջ : Էս կարծեմ որ միայն կին մը կրնայ զայն աղէկ նկարագրել, իմ գրիչս բաւական նուրբ չէ այդ պատկերը հանելու համար : Առաջին տեսնելուդ՝ չես ըսեր աղբիւր մը : Քառակուսի փոքր տաճարի մը ձևն ու

նի, և շինացի յարկով մը ծածկուած է, որ իր վէտ վէտ քիւերն պատերէն շատ դուրս կը կարկառէ, և կու տայ իրեն բակոտի անորոշ երևոյթ մը : Չորս անկիւններն չորս բոլորչի աշտարակիներ կան, վանդակապատ պատուհանիկներով, կամ մանաւանդ նազենագոյն ձևով չորս համանոցակներ, որոնց կը համապատասխանեն ծածկին վրայ նոյնաթիւ թեթև գմբեթիկներ, իւրաքանչիւրն ՚ի գագաթն շնորհալուք բուրգով մը, որոնք ՚ի միջակին կանգնած մեծագոյն գմբեթի մը պսակ կը յօրինեն : Իւրաքանչիւր չորս որմնց վրայ կրկին գեղեցկավայելուշ խորշեր կան . ընդ մէջ խորշից սրակամար աղեղ մը . աղեղան տակ՝ ծորակ մը, որ պզտի աւաղանի մը մէջ լուր կը վազցընէ : Շինուածոյն չորս կողմնս արձանագրութիւն մը կը պտըտի, որ կ'ըսէ . — Այս աղբիւրն առ քեզ կը խօսի իր հնութեանը վրայ սուլթան Աճմէտի յետագայ տողից մէջ . այս յստակ և անդորր աղբեր բանալին դարձուր և կտրգայ զանունն Աստուծոյ . այս անըս պառ և ականակիտ շուրէն խմէ և ազօթէ Սուլթանին համար : — Փոքր շինուածք բոլոր սպիտակ կիճէ է, որ հազիւ կ'երևայ անթիւ պատերը ծածկող զարդարանաց տակ . պզտի կամարներ, խորշիկներ, սիւնակներ, ծաղկաձև սեթեթիկներ, բազմանկիւններ, ժապաւէններ, մարմարեայ գործածներ, կապոյտ յատակի վրայ ոսկեզօծութիւնք, գմբեթաց բոլորտիքը ծոպեր, ծածկին տակը երփն երփն տախտակօք դրուանքներ, հարիւր գոյնով միւսերոններ, հազար ձևով արարելի զարդեր, որ կարծես թէ աչքով նշմարելու ժամանակը կը խառնակին, և գրեթէ կը զայրացընեն հիացման զգացումը : Չկայ ասի մը տեղ որ քանդակեալ, մանրանկարեալ, տանջեալ չըլլայ : Բիւրեղեայ անօթոյ մը տակ դնելու բարբձուութեան, ճոխութեան, երկայնմտութեան հրաշալիք մ'է, բան մը՝ որ կարծես թէ միայն աչաց համար եղած չըլլայ, այլ թէ համը մը պիտի ունենայ, և կ'ուզես կտոր մը

ծծել. արկղ մը՝ որ կ'ուզես բանալ տես. նեւու համար ինչ կայ ներսն, եթէ արդեօք մանուկ աստուածուհի մը կամ մեծ մարգարիտ մը կամ զիւթական մատանի մը: Ժամանակը մասամբ մը ոսկեգօծութիւնքը պլազուներ, գոյններ խառնակեր և կիճքը սեցուցեր է: Ինչ պիտի եղած ըլլար այս սկայագործ գոհարն, երբոր հարիւր և վախտուն տարի առաջ առաջին անգամ բացուեցաւ, բոլորովին նոր և փայլակնացայտ, հանդէպ այաց Վոսփորի Սողոմոնին: Այլ այսպէս հինօրեայ և սև ըլլալովն ալ, դեռ կոստանդնուպօլսոյ բոլոր փոքր հրաշալեաց վրայ առաջնութիւնը կը պահէ. և բաց աստի, այնպէս պարզապէս տաճկական յիշատակաբան մ'է, որ յետ մի անգամ տեսանելոյ, յիշողութեանդ մէջ միշտ բևեռապինդ կը մնայ այն կարգ մը թուոյ նկարուց մէջ, որ ապա բոլորը մէկտեղ մտաց առջև կը փայլակեն՝ ամեն անգամ որ Ստամպուլի անունը ականջիդ հնչէ, և կը ձևացընեն իբրև արևելեան պատկերին յատակը, որուն վրայ պիտի շարժի մշտնջենապէս մեր մտածմունքը:

Աղբիւրէն Սուրբ Սոփիայի մզկիթը կը տեսնուի, որ կը փակէ հրապարակին մէկ կողմը:

Արասքին երկոյթը նշանակելի բան մը չունի: Այն որ միայն աչաց կանկ առնել կու տայ, չորս սպիտակ բարձրաբերձիկ մինարէքն են, որ կ'ամբառնան շինուածոյն չորս անկիւնը տուներու պէս մեծ պատուանդանաց վրայ: Հըռչակաւոր գմբէթը փոքրիկ կ'երևայ: Չի կարծուիր որ նոյն այն գմբէթն ըլլայ՝ որ կը տեսնուի կապուտին մէջ ոլորտանալ տիտանի մը գլխոյն պէս՝ ի բերայէ, ի Վոսփորէ, ի Մարմարա ծովէ և ի բլրոց Ասիոյ: Տափարակեալ զբմբէթ մ'է, կողմնակի ունենալով երկու կէտ գմբէթներ, կապարով պատուել, պատուհաններով պսակեալ, որ չորս սպիտակ և վարդագոյն լայն գիծերով նկարեալ որմնոյ վրայ կը յենու, և ասորք ալ ահագին հաստարանաց կրթը

նած են, որոնց չորս կողմը խառնխուռն կը բարձրանան փոքր անարգատեսիլ շատ շինուածներ, — բաղանիք, դպրոցք, շիրիմք, հիւրանոցք, աղբատաց խոհարանք, — որ մայրեկեղեցոյն հին ճարտարապետական ձևը կը ծածկեն: Միայն կը տեսնուի ծանր, անկանոն, դեղնագոյն, ամբողջի մը պէս մերկ զանգուած մը, և ըստ երևութիւն ոչ այնչափ մեծ, ինչուան չգիտցողին ենթադրել տալու որ հօն մէջն ըլլայ Սուրբ Սոփիայ միջավայրին անհուն դատարկութիւնը: Հին մայրեկեղեցիէն յատկապէս ուրիշ բան չի տեսնուիր բայց եթէ մզկիթն, և այն ալ կորուսած է արծաթեայ փողփողումը, որ ըստ ասելոյ Յունաց, կը տեսնուէր ի գաղաթէն Ոլիմպեայ: Բոլոր մնացածը մուսուլման է: Մինարէ մը Մէհմէմէտ Ֆէթիհ բարձրացուց, ուրիշ մը Սէլիմ Բ, մէկալ երկուքը Մուսուտ Գ: Նոյն Մուրատայ են մոյթքն՝ բարձրացեալք վնասասնեւորդ դարուն վերջերն՝ գետնաշարժէ մը ցնցուած պատերը բռնելու համար, և գմբէթին ծայրը տնկուած պղնձէ ահագին մահիկը, որուն միայն ոսկեգօծութիւնը յիսուն հազար տուքագարժեց: Հին անդատական աներկոյթ եղած է. մկրտարանը փոխուած է ի փառաւոր շիրիմ Մուսղաֆայի և Ա իպրահիմի. գրբիթ մէկալ բոլոր յարակից յունական եկեղեցոյն շէնքերը, կամ աւրուած, կամ նոր որմերէ ծածկուած, կամ այնպէս մ'այլափոխուած են որ ալ չեն ճանչցուիր: Ամեն կողմանէ մզկիթը կը սեղմէ, կը ճնչէ և կը պատրուակէ զեկեղեցին, որուն միայն զուլին ազատ է, և սակայն վրան կը հսկեն իբրև չորս հսկայաձև պահակապանք՝ կայսերական չորս մինարէք: Յարևելից կողմանէ պարփիւրէ և կիճէ վեց սիւներով զարդարեալ դուռ մը կայ. ի հարաւակողմն ուրիշ դուռ մը, ուսկեց զուլի մը մէջ կը մտցուի պատեալ ի ցածագոյն և յանհաւասար շինուածոց. որուն մէջտեղն լուացմանց համար աղբիւր մը կը ցնցղէ, ծածկեալ կամարակապ փոքր տաճարէ մը,

վերամբարձեալ ութ սիւնակներէ : Եթէ դրսէն նայիս, Ստամպուլի մէկալ ուրիշ մեծ եկեղեցիներէն զՍուրբ Սոփիա շես զանապաներ, բայց եթէ միայն ասով որ նուազ ճերմակ է և նուազ թեթև և շատ աւելի նուազ կ'անցնի մտքն, թէ այն ըլլայ « մեծագոյն տաճարն աշխարհի յես Սրբոյն Պետրոսի » :

Մեր առաջնորդը տարին զմեզ նեղ ճամբէ մը, որ շինուածոյն հիւսիսային կողմը կ'ընայ, առ դուռն մի պղնձի, որ դարձաւ մեզմով ծղիւննացը վրայ, և մտանք գաւթին մէջ :

Այս գաւթիթը, որ երկայնաձիգ և բարձրաձեղուն սրահ մ'է, կիճով պատած և դեռ հօս և հօն հին միւսիոննեւրով պողպատովն, ինն դռներէ մուտք կու տայ արևելեան կողման թևոյն, 'ի հնուամն հակառակ կողմէն կը մտցընէր ուրիշ հինգ դռներէ ուրիշ գաւթի մը մէջ, որ երեքտասան դռներով անդաստակին հետ կը հաղորդէր :

Հագու շեմէն անցանք, փակեղաւոր մզկիթապանի մը մեր մտնելու հրամանագիրը ցուցինք, հողաթափներ հագանք, և առաջնորդաց ակնարկութենէ մը, երկկողմաբառն մտեցանք արևելեան կողման միջին դրանը, որ բաց մեզի կը սպասէր :

Սյն ինչ միջավայրին մէջ ոտք դրինք, երկուքնիս ալ մէկտեղ մնացինք իբրև բևեռաբլր :

Առաջին ազգեցութիւնը յիրուի մեծ է և նոր :

Հայեացքով մը կ'ընդգրկես ահագին դատարկութիւն մը կէս գմբեթներու, որ կարծես թէ օգէն կախուած են, անչափելի խարսխաց, հակայաբերձ կամարաց, վիթխարի սեանց, սրահից, վերնատանց, դաշխաց յանդուգն ճարտարապետութիւն մը, որոց վրայ հազար մեծ պատուհաններէ լուսոյ հեղեղ մը կ'իջնէ : սրբազանէն աւելի թատրոնական և իշխանապանձ չգիտեմ ինչ մը, մեծութեան և զօրութեան չուշականք մը, աշխարհային պերճութեան երևոյթ մը, ընտրականի, խուճղութի, օտարոտոյ, յանձնապաստանի, մեծա-

պայծառի խառնուրդ մը . մեծ ներդաշնակութիւն մը, յորում խարսխաց և կիկլոպեան կամարաց, որ կը յիշեցընեն հիւսիսային մայրեկեղեցիքը, որոտագոյ և ահեղաձայն զօլանից հետ կը խառնուին արևելեան ազնուական և դայն երգեր, Յուստինիանոսի և Հերակլեսոյ կոչնոց բազմաշառաչ երաժըշտութիւնք, հեթանոսական նուագացարձագանգներ, կնամարդի և խոնջ ժողովրդեան մը նուազ ձայներ, և վանդալաց, Ավարացոց և Գոթաց հեռաւոր աղաղակներ . անչբացեալ մեծ վեհափառութիւն մը, տգեղ մերկութիւն մը, խորին խաղաղութիւն մը . ամիոփեալ և ծեփեալ Սուրբ Պետրոսի մայրեկեղեցոյն և հսկայացեալ և ամայի Սուրբ Մարկոսի մայրեկեղեցոյն զաղափար մը . երբեք չտեսնուած խառնուրդ մը տաճարի, եկեղեցոյ, մզկիթի, խիստ տեսաւարմը և տղայական զարգարանք, հին բաներով և նոր բաներով, պալազան գոյներով, և անժանօթ և նորահնար յաւելուածովք . վերջապէս տեսարան մը՝ որ կը զարթուցանէ միանգամայն զարմացման և թաղծութեան զգացում մը, և քիչ մը ժամանակ տարտամ ոգւով կեցընել կու տայ՝ խօսք մը փնտրուելու պէս՝ որ բացատրէ և հաստատէ յատուկ մտածմունքը :

Շինուածը կառուցեալ է գրեթէ հաւատարկողով օւղղանկեան մը վրայ, որու մէջտեղը կամառանայ մեծագոյն գմբեթը, վերամբարձեալ չորս մեծ կամարներէ, որոնք կը հանգչին չորս բարձրաչէն խարսխաց վրայ, որ են իբրև ոսկերտութիւն բոլոր մայրեկեղեցոյն երկու կամարաց՝ որ մտնողին դիմաց կ'ընեն, կը յենուն երկու մեծ կիսազրմբէթք, որոնք կը ծածկեն բոլոր միջավայրը, և անոնց իւրաքանչիւրը կը բացուի ուրիշ երկու փոքրագոյն կիսազրմբէթաց մէջ, որ իբրև չորս պղտի բոլորի տաճարներ կը ձևացընեն մեծ տաճարին մէջ : Մտից հակառակ կողման երկու փոքր տաճարաց մէջ կը բացուի կոնքն ( abside ), այն ալ քառորդ

գնտոյ կամարով մը գոցուած : Ուրեմն եօթն կէս գմբէթներ են՝ որ մեծագոյն գմբէթին բոլորքը պսակ կը յօրինեն, երկու ասոր ներքեւը, և հինգ այն երկուքին ներքեւը, առանց երեսիլի յենարան կէտի, այնպէս որ ամենը մէկէն կ'ընծայեն զարմանազբանչ թեթևու թեան երեոյթ մը, և կը կարծուին յիւրաի, ինչպէս ըսաւ յոյն բանաստեղծ մը, եօթն թեւով յերկնից կամարէն կախեալք : Բոլոր այս գմբէթներն ըուսաւորեալ են կամարաձև և զուգաչափ մեծամեծ պատուհաններէ : Չորս վիթ խորի խարսխաց մէջ, որ 'ի միջակի մայրեկեղեցւոյն քառակուսի մը կը ձևացընեն, յաջ և 'ի ձախ մասողին կ'ամբառնան կանաչ կիճէ ութ հրաշա տեսիկ սիւներ, որոնց վրայ կը կորանան սաղարթազարդ քանդակեալ շքնորհաշուք կամարներ, որ միջավայրին երկու կողմուներ կը ձևացընեն ամենավայելուչ կամարակապ դահլիճ մը, և կը վերցընեն մեծ բարձրութեամբ մը երկու լայնարձակ սրահներ, որոնք կը ներկայացընեն ուրիշ երկու կարգ սիւներ և քանդակածոյ կամարներ : Երրորդ սրահ մը, որ կը հաղորդի երկուց առաջնոց հետ, կը բունէ մտից կողման բոլոր երկայնութիւնը, և երեք մեծ կամարներով, որոնք վերամբարձեալ կան երկուորեակ սիւներէ, կը բացուի միջավայրին վրայ : Ուրիշ փոքրագոյն սրահներ, պորփիրեոյ սիւներով բարձրացած, միջավայրին ծայրը զետեղած չորս փոքր տաճարաց մէջ կը մանեն, և կը վերցընեն ուրիշ սիւներ, որոնց վրայ վերնատուններ կը յինուուն : Այս է մայրեկեղեցին : Մզկիթն է իրեւ սփռեալ իմն անոր ծոցոյն մէջ և կը ուուեալ որմնը վրայ : Միհրապը, — Մէքքէ ցուցընող ուղղութեան խորշը, — կոնքին խարսխի մի մէջ փորուած է : Դէպ 'ի վեր իր աջակողմը, կախուած է չորս գորգերէն մէկն՝ որուն վրայ Մահմէտ իր աջօթը կ'ընէր : Միհրապի մերձաւորագոյն կոնքին անկիւնը, գծուարեւանեի սանդղիկի մը ծայրը, կողմնակի ունենալով կիճէ կրկին սիւնազարդ

վանդակներ՝ հոյակապ նրբութեամբ մը քանդակած, կոնաձև նորահնար յարկի մը տակ, Բ Մէհմէմէտի կրկին յաղթական դրօշից մէջտեղն, դուրս կը ցցուի ամպիոնը, ուր ֆեսաթիպը կ'ելլէ զՂուրանը կարգալու, մերկ սուր մը 'ի բռին, ցուցընելու համար որ Սուրբ Սոփիա նուաճեալ մզկիթ մ'է : Ամպիոնին զիմաց՝ Սուլղանին վերնատունը կայ, ծածկուած ոսկեզօծ գծազարդ վանդակով : Ուրիշ ամպիոններ կամ'ուսմալեաց տեսակներ, ծակուկէն քանդակեալ սիւնազարդ վանդակներով, և վերամբարձեալ կճեայ սիւնակներով և արարելի պճնեալ կամարներով, կը տարածուին հօս և հօն ընդ երկայնութիւն որմոցն կամ կը յառաջնն դէպ 'ի միջավայրը : Մտից աջ և ձախ կողմը, ալապատէ երկու ահագին սափորներ կան, Պերդամայի աւերակաց մէջ գտնուած, և յԳ Մուրատէ փոխադրեալ 'ի կոստանդնուպօլիս : Խաւրիսներէն, մեծ բարձրութենէ մը, ահագին կանաչ սկաւառակներ կը կախուին, ոսկեղէն գրերով Ղուրանի արձանագրութեամբք : Վարը մեծամեծ պորփիրէ տոմներ կախուած են որմնց վրայ, Ալլահի, Մահմէտի և առաջին չորս խալիֆայից անուամբք գրուած : Գմբէթը վեր վերցընող չորս կամարներէն ձևացած անկեանց մէջ դեռ կը տեսնուին միւսինն չորս քերովբէից տարածեալ թերքը, որոնց երեսը գոցուեցաւ ոսկեզօծ ծաղկաձև զարդով մը : Գմբէթից կամարներէն կերպասէ անթիւ լարեր կը կախուին, որ մայրեկեղեցւոյն գրեթէ բոլոր բարձրութիւնը կը չափեն, և կը կրեն շայրաման հաւկիթ, քանդակուածոյ պղնձէ կանթեղներ, և բիւրեղեայ գունտեր : Հօս և հօն իրգասեան փայտէ գրակալներ կը տեսնուին, սատափով և պղնձով ազուցիկ, վրանին ձեռագիր Ղուրաններ : Գատակը գորգերով և սիրիթներով ծածկուած է : Պատերը մերկ, սպիտակադոյն, դեղնադոյն, սև մախրադոյն, դեռ աեղ տեղ ամոյն միւսիննօք զարդարուած : Ընդհանուր տեսքը՝ տխուր է :

Մղկիթին առաջին զարմանալըն մեծ գոմէթն է։ Միլավայրին մէջանդէն նայելով յայն, յիտաւի կարծես թէ, ինչպէս ըստ Սդայէլ Սուրբ Պետրոսի գոմէթին համար, մեր գլխոյն վրայ կախուած վիհ մը կը տեսնես։ Ամենաբարձր է, ահագին շրջապատ մ'ունի և իր խորութիւնը իր տրամագծին միայն վնցերորդ մասն է, որ շինքը նաև աւելի մեծ կ'երևցընէ։ Իր խորոխին չորս կողմը տամալիք մը կայ. տամալեաց վրայ քառասուն կամարածև պատուհանաց պսակ մը։ Գագաթան վրայ գրուած է այն վճիռն զոր հնչեցուց Մէհէմմէտ Բ մայրեկեղեցոյն աւագ խորանին դիմաց իր ձին կեցընելով կոտանդուպոյտ առման օրը. — Ալլահ է լոյսն երկնից և երկրի. — և դբերէն ոմանք, սևազոյն յատակի վրայ սպիտակք ինն մեղր երկայնութիւն ունին։ Ինչպէս ամենքը գիտեն, այս օգակաւոյց հրաշակերտն սովորական շինութեան նիւթերով չէր կրնար ելլել ՚ի գլուխ. կամարները շեշաքարամբ շինուեցան, որ ջրոյ վրայ կը լողայ, և Հոռոսի կղզւոյն աղիւսներով, յորոց հինգը հազիւ հասարակ աղիւսոյ մը չափ կը կշռեն։ Իւրաքանչիւր աղիւսոց վրայ Դաւթի վճիռը գրուած էր. — Աստուած ՚ի սէջ ևնոյ և ևնքս մի սասնևնացիև։ Օգնևսցէ ևնոյ Աստուած ՚ի վաղորդայևէ միևև ՚ի վաղորդայև։ — Առ իւրաքանչիւր երկոտասան պտոյտ աղիւսոյ, սրբոց մասունք կ'որմէին կամարին մէջ։ Մինչդեռ գործաւորք կ'աշխատէին, քահանայք կ'երգէին. Յուստինիանոս կտաւէ պատմուծան մը հազած առընթերակոյ կ'ըլլար. անհուն բազմութիւն մը հիանալեզ կը նայէր։ Եւ զարմանալու բան չկայ՝ երբոր մտածես որ այս « երկրորդ հաստատութիւն » շինութիւնը, քան չեղի ևս և մեր օրերուն մէջ, անօրինակ յանդգնութիւն մ'էր վնցերորդ դարուն մէջ։ Ռամիկը կը կարծէր որ հմայութեամբ վեր կեցած ըլլայ, և Տաճիկը զայն ստանալէն երկար ժամանակ վերջը, հարկադրեցան, Սուրբ Սոփիայ

մղկիթին մէջ աղօթելու տեսնալու հասել իրենք զիրենք աչքերնին յԱրևելս դարձընելու՝ փոխանակ բարձրացընելու առ « երկինքն քարեղէն »։ Արդարև գոմէթն գրեթէ միլավայրին կէսը կը ծածկէ, այնպէս որ կ'իշխէ և կը լուսաւորէ զբոլոր շինուածը և ամեն կողմերէն հատուածի անջրպետ մը կ'երևայ. կ'երթաս կ'երթաս և միշտ տակը կը գտնուի, և կը դառնաս հարիւրերորդ անգամ քու աչքդ և մտածմունքդ թաւալելու անոր մէջ, բուն հաճոյից սարսուռով մը, որ թռչանաց զգացման կը նմանի։

Միլավայրն և գոմէթը տեսնելէն ետքը, հազիւ սկսած կ'ըլլաս Սուրբ Սոփիա տեսնել։ Չոր օրինակ՝ ով որ քիչ մը պատմական հետաքրքրութեան ըստուէր մ'ունի, կրնայ ժամ մը քննել զսիւները։ Հօս կան բոլոր աշխարհիս տաճարաց կապուտ կոյուպուտքը. կանաչ կիճէ սիւնքը, որ վեր կը վերցընեն երկու մեծ սրահքը, յատենակալաց Եփեսոսի ընծայեցան առ Յուստինիանոս, և Անահայտ տաճարին կը վերաբերէին, որ յաճիւն դատեցաւ յերոտտատոսէ։ Պրփիւրէ ութ սիւներն, որ ընդ մէջ խորսիսաց զոյգ զոյգ կը բարձրանան, կը վերաբերէին Արեգական տաճարին՝ զոր ամբարձ Աւրղիանոս ՚ի Պաալպէք։ Ուրիշ սիւներ՝ կիւղիկեան Արամազդոյ տաճարէն, Պաւլիսոյ Իլիոսի (Արեգական) տաճարէն, Թեբէի, Աթէնքի, Հոսովմայ, Տրոյիոյ, Կիւկլաոյց, Աղիքսանդրիոյ տաճարներէն են. և մեծութեան և գունոց անթիւ զանազանութիւն մը կ'ընծայեն։ Սիւներու, սիւնազարդ վանդակաց, պատուանդանաց, և սալաքարանց մէջ, որ որմոց հին ծեփէն մնացեր են, կը տեսնուին Արշիպեղազոսի, Գորբ Ափոյ, Ափրիկէի և Գաղղոյ ամեն հանքաց մարմարիոնքը։ Վոսփորի կիճը, սպիտակ, սևով խայտախարիւ եղած, ճերմակ երակով սև կելտականին դիմադէմ գրուած. Լակոնիոյ կանանչ կիճը՝ Լիբիոյ կապոյտ մարմարին մէջ կը ցուանայ. Եզիպտոսի կիտուած ազարդ պար

փխրը, թեալ իոյ աստեղագի կրանի-  
տը, Եասսի լեռան կարիացի քարը սպի-  
տակով և սևով զծաւորեալ, երկաթով  
խայտուտիկ ամոյն կարիասական մար-  
մարն, իրենց գոյները կը խառնեն փը-  
ռիւգեան մարմարիոնի ծիրանւոյն ,  
Սիւնադայի մարմարիոնի վարդին ,  
Մաւրիտանիոյ մարմարին ոսկւոյն , Պա-  
րոսի մարմարիոնին ձեան հետ : Այս  
գունոց զանազանութեան վրայ աւել-  
ցուր ժապաւինաց , դրուագաց , ծաղ-  
կաձև գարդուց , վանդակասանց ,  
կորնթական նորաձև ճարտարագիտու-  
թեամբ խոյակաց աննկարագրելի գա-  
նազանութիւն մը , յորս հիւսուած են  
կենդանիք , տերեք , խաչք , քիմեոք ,  
և այլք որ կարգի մ'ալ չեն վերաբերի ,  
հրէչք նկարով և մեծութեամբ անհա-  
ւասարք , ըստ դիպաց մէկտեղ եկած .  
և սեանց բուններ և այլանդակ արձա-  
նագործութեամբ պճնազարդեալ պա-  
տուանդաններ , դարերէ մաշած և սու-  
րերէ ճեղքուած . որ ամենքը մէկտեղ  
նորատեսիլ երեոյթ մը կ'ընծայեն ան-  
կարգ և բարբարոսական վէհափառու-  
թեան , և կիրթ ճաշակի եպերանքն են ,  
և չես կրնար աչքդ կտրել անոնցմէ :  
Սակայն միջավայրին մէջ կեցած ,  
չես կրնար իմանալ մզկիթին բոլոր ընդ-  
արձակութիւնը : Արդարև միջավայրն  
միայն պզտիկ մաս մ'է : Երկու կամա-  
րակապներն , որ կողմական սրահքը  
վեր կը վերցընեն , իրենք իրենց միայն  
երկու մեծամեծ շէնքեր են , յորոց կըը-  
նաս երկու տաճար շինել : Անոնց իւրա-  
քանչիւրը երեք մաս բաժնուած է ,  
քարձորաբերձ կամարներէ անկատեալք :  
Նաև հօս սիւններ , թակաղակներ , խա-  
րիսիներ , կամարներ , ամենայն ինչ ա-  
հագին է : Այն կամարակապներուն  
տակ պտըտելու ժամանակ , հաղիւ կը  
տեսնուի , Եփեսոսի տաճարին սեանց  
անջրպետից պատճառաւ , մեծ միջա-  
վայրը , և կարծես թէ ուրիշ մայր-  
եկեղեցւոյ մը մէջ ես : Նոյն ազգեցու-  
թիւնը կ'ունենաս նաև այն սրահներէն  
յորս ամենաթեթև միամամբ պարու-  
րաձև սանդղէ մը կ'երթաս , կամ մանա-

ւանդ գառիվեր ճամբէ մը , և ձիաւոր  
մարդ մը հօն դիւրութեամբ կրնայ ել-  
լել : Սրահները կանանց պահուած ե-  
կեղեցւոյն վերնատունքն էին . ապաշխա-  
րոցը գաւթին մէջ կը կենային , հա-  
ւատացելոց բազմութիւնը միջավայ-  
րին մէջ : Իւրաքանչիւր սրահ կրնայ  
կոստանդնուպօլսոյ արուարձանի մը  
ժողովորդը պարունակել : Ալ չես կար-  
ծեր որ եկեղեցւոյ մէջ ըլլաս . կարծես  
թէ տիտանական թատրոնի մը պատըշ-  
գամին վրայ կը պտըտիս , ուր քանի մը  
վայրկենէն պիտի հնչէ հարիւր հազար  
ձայնից երգ մը : Մղկիթը տեսնելու  
համար պէտք է կարկառիլ սինազարդ-  
վանդակէ մը և այն ատեն բոլոր մեծու-  
թիւնը կ'երևայ : Աղեցքն , կամարքն ,  
խարիսիքն , ամենայն ինչ հսկայա-  
կերպ է : Կանաչ սկաւառակները , որ  
կարծես թէ բազիլա պիտի չափուէին ,  
տուն մը կը ծածկեն : Պատուհանքն՝  
պալատանց դռներ են . քերովբէից  
թեքն նաւուց առագաստներ են . վեր-  
նատունքն՝ հրապարակներ են . դմբէ-  
թը՝ դուխ կը պտըտընէ : Աչքը վար  
խնարհեցընելով , ուրիշ զարմանք մը  
կ'ունենաս : Չէիր կարծեր որ այնչափ  
բարձր ելած ըլլաս : Միջավայրին դու-  
տիկոնը վարը անդունդի մը խորն է ,  
և ամպիոնքն , Պերգամայի սափորքն ,  
սփրիդքն , կանթեղքն , տարապայման  
կերպով փորկացած կը կարծուին :  
Հօնկէ քան թէ վարէն Սուրբ Սոփիայի  
մզկիթին նորօրինակ յատկութիւն մը  
լաւագոյն կը տեսնուի , և է՝ որ միջա-  
վայրը Մէքքէի ճիշդ ուղղութիւնը չու-  
նենանաս , որուն պէտք է դառնան մու-  
սուլմանք աղօթելու ժամանակ , բոլոր  
սփրիդներն և բոլոր գորգերն շինուա-  
ծոյն զձից խոտորնակի դրուած են , և  
գէշ կ'երևան աչաց իբրև հեռահայե-  
ցութեան մեծ սխալ մը : Վերէն աղէկ  
կ'ընդգրկուի աչաց հայեցուածով և  
մտօք մզկիթին բոլոր էութիւնն : Ըս-  
կատնին գէպ 'ի գետին սփրիդաց վրայ  
ծնրագրած Տաճիկներ կը տեսնուին .  
այլք ձեռքերնին երեսներնուն առջև  
արձանաց պէս կանգուն կայնած իբրև

թէ խօսէին ամերեոն խորշովից հետ. ոմանք խարսխի մ' ուզը ծունկ ծնկան վրայ եղեալ նստած, իբրև թէ ծառի մը հովանոյն տակ հանգչէին. քանի մը քօղածածուկ կանայք 'ի ծունր առանձին անկիւն մը, ծերեր' դրակալաց դիմաց նստած, որ զՂուարնը կը կարդան. իմամ մը՝ մանկանց խումբի մը սուրբ տողեր արտասանել կու տայ. և հօս և հօն հեռաւոր կամարակապից տակ և սրահից մէջ, իմամ, քեաթիպ, միւէզդին, մզկիթի ծառայք, նորաձև զգեստիւք, որ անմուռն կ'երթան և կու գան իբրև թէ յատակին չի գպչէին: Կարդացողաց և աղօթողաց դաշն և միակերպ ձայներէն ձևացած ներդաշնակութիւնը, այն նորաձև հազար կան թեղքն, այն պայծառ և հաւասար լայսը, այն ամայի կոնքը, այն լռանիստ լայնարձակ սրահներն, այն անբաւու թիւնն, այն յիշատակներն, այն անդորրութիւնը՝ մեծութեան և դաշտնեաց տպաւորութիւն մը կը թողուն 'ի հոգին, զոր ոչ խօսքը կրնայ բացատրել և ոչ ժամանակը կարող է ջնջել:

Այլ 'ի խորս, ինչպէս արդէն ըսի, տխուր տպաւորութիւն մ'է, և չախալեցաւ մեծ քերթողն որ բաղդատեց զմզկիթին Սուրբ Սոփիա « հսկայական գերեզմանի » մը, վասն զի ամեն կողմանէ սոսկալի աւերի մը հետք կը տեսնուի հօն, և այժմեան եղածին վրայ դարմանալով այնչափ շեւ զուարճանար, որչափ ցաւ կը զգաս մտածելով զայն ինչ որ էր երբեմն: Յետ հանդարտելոյ առաջին դարմանաց զգացման, մտածմունքն անընդդիմադրելի կը խոյանայ անցելոյն մէջ: Եւ դեռ այսօր, երեք տարիէն ետքը, մեծ մզկիթը 'ի միտս իմ չարձանանար երբէք՝ որ ես զիս չբռնադատեմ փոխանակ անոր եկեղեցին առջևս ներկայացընելու: Մուսուլմանեան ամպիրոնները կը տապալեմ, կանթեղներն և սափորներն կը վերցնեմ, կը հանեմ 'ի բաց սկաւառակքը և պորփիրերայ տախտակներն, կը բանամ որմամ զոններն և պատուհանքն, կը քերբեմ ձեպն որ պատերն և կամարներն

կը ծածկէ, և հաս մայրեկեղեցին ամբողջ և ամենանոր, ինչպէս երեքտասան դար առաջ, երբոր Յուստինիանոս աղաղակեց. — Փառք Աստուծոյ, որ զիս արժանի դատեցաւ այս գործը 'ի զլուխ հանելու: Սողոմոն, յաղթեցի քեզ, — Ո՛ր կողմանէ որ այքդ պտրտի, ամենայն ինչ կը ճաճանչէ, կը շողշողէ և կը փայլատակէ, ինչպէս առասպելաց գիւթական արքունեաց մէջ: Մեծամեծ որմունքը, ազնիւ կիճերով պատած, կ'արձըկեն ոսկւոյ, փղոսկրի, պողովատկի, բատոյ, սատափի ցովմունքներ. մարմարիոնաց անթիւ բիծերը, պսակաց և բողբոց ծաղկանց տեսիլ կ'ընծայեն. վանակնի անթիւ միւսիոնները կու տան պատերուն (որոնց վրայ արևուն ճառագայթ մը կը զարնէ) աղամանդակու արծաթեայ որմոց երևոյթ: Խոյակները, դուռադները, զոները, կամարաց զարդերը յոսկեզօծ պղնձէ են: Կամարակապ սրահից և դահլճաց կամարներն, հրանկար, ոսկեղէն յատակի վրայ՝ հրեշտակաց և սրբոց հսկայակերպ պատկերներ կ'ընծայեն: Խարբսխաց առջև, մատրանց մէջ, դրանց քով, սեանց մէջ տեղ, կանգուն կան մարմարիոնէ և պղնձէ արձանք, ձոյլ ոսկի ահագին ստեղաւոր աշտանակներ, թաղաւորական աթոռոց պէս շողշողէնի գրակալաց վրայ յեցած հսկայաձև աւետարաններ, փղօսկրեայ բարձր խաչեր, մարգարտօք պաղպաղուն անօթներ: Միջամլայրին խորունկը կը տեսնուի միայն խաւնակ շողիւն մը իբրև շատ մ' այրող բաներու: Դասին սիւնազարդ վանդակն է, ոսկեզօծ պղնձէ ամպիրոնն է, քառասուն հազար լիպտի արծաթով դրուագեալ, որ եգիպտոսի տարւոյ մը տուրքն արծեց. եօթն քահանայից աթոռներն են, պատրիարքին աթոռը, ինքնակալին գահը, ոսկեզօծեալք, քանդակածոյք, երփնազարդեալք, մարգարտայեոք, յորս երբոր շեշտակի կ'իջնէ լոյսն, շեւ կրնար աչք սևեռել: Այս շքեղութիւններն անդին, եկեղեցւոյ կոնքին մէջ, աւելի զառիճաւ փայլատակու մը կը տես.

նուի: Խորանն է, որուն սեղանը, վեր-  
ամբարձեալ չորս ոսկեղէն սիւներով,  
արծաթոյ, ոսկոյ, անադի, և մարգար-  
տաց ձուլմամբ եղած, և տապանակն՝  
զուտ արծաթէ չորս սիւներով ձևացած,  
որոնց վրայ կը բարձրանայ ձուլածոյ  
ոսկի գմբէթ մը, վերցընելով ոսկեղէն  
գունտ մը և խաչ մ'երկու հարիւր վաթ-  
սուն լիպրէ ծանրութեամբ: Սեղանէն  
անդին աստուածային Իմաստութեան  
հսկայաբերձ պատկեր մը կ'ամբառնայ,  
որ ոտքերովն յատակին կը դպչի և  
դիտով կոնքին կամարին: Այս բոլոր  
գանձուց վրայ կը փայլակեն 'ի բար-  
ձունս եօթն կիսագմբէթք՝ վանակնի և  
ոսկոյ միւսիոններով ծածկեալք, և մեծ  
գմբէթն, որուն վրայ կ'երկըննան ա-  
ռաքելոց, աւետարանչաց, Կուսին և  
Խային անչափելի պատկերներն, բոլոր  
ոսկեզօծ, գունաւորեալ և փայլակնա-  
նշոյլ, իբրև զոհարից և ծաղկանց կա-  
մար մը: Եւ գմբէթք և սիւնք և արձանք  
և ստելնաւոր աշտանակք կ'անդրադառ-  
նան ալեձև պրոկոննեսեան մարմարեո-  
նէ ահագին յատակին վրայ, որ չորս  
դիւսաւոր դռներէն նայելով, չորս շքեղ  
դէտոց պատկերը կը ներկայացընէ,  
հողմէն ծածանած: Այսպէս էր մայր-  
եկեղեցւոյն ներսը: Բայց պէտք է նաև  
յիշել մեծ գաւիթը, բոլորեալ 'ի սեանց  
և միւսիոնապատ որմերէ, և զարդա-  
րեալ կճեայ աղբիւրներէ և ձիւստը ար-  
ձանիկներէ: Եւ աշտարակը՝ ուսկից երե-  
սունեկերկու գանգակք իրենց հակեղ  
դանչիւնները կը լեցընէին եօթանց  
բլրոց: Կղնձեայ հարիւր դրունք՝ ար-  
ծաթեայ խորաքանդակազք և վերտա-  
ռութեամբ դրուագեալք: սիւնհողոսից  
սրահքն, ինքնակալաց սենեակքն, քա-  
հանայից բանտքն, մկրտարանն, զան-  
ձիւք լի ընդարձակ աւանդատունքն, և  
անդաստակաց, սեղանատանց, նուրբ  
անցից, գաղանի սանդղոց բաւիղ մը,  
որ կը պտտէին յինուածոյն կողից չորս  
կողմը և կը տանէին վերնատանց կամ  
ծածուկ աղօթարանաց: Արդ կրնայ  
գուշակուիլ թէ ինչպիսի տեսարան  
կ'ընծայէր այսպիսի մայրեկեղեցի մը

կայսերական հարսանեաց, ժողովոց,  
թագադրութեանց մեծամեծ հանդի-  
սից ատեն. երբոր Կայսերաց ահագին  
պալատէն, հազար սեամբք պճնեալ  
ճանապարհի մը մէջէն, միտնեղք և  
ծաղկամբք սիւսեալ, խնկովը և զմնով  
անուշահոտեալ, մեծադին անօթներով  
և կերպասէ պաստառակալք պճնա-  
զարդեալ տանց մէջէն, կապուտից և  
կաւկասից կրկին խմբից մէջէն, քեր-  
թօղաց երգոց և նուիրակաց աղաղա-  
կաց մէջէն, որ կեցցէ կը գոչէին ինքնա-  
կալութեան ամեն լեզուով, կը յառա-  
ջէր ինքնակալն, խաչապսակ թագով  
մը, կուսքի մը պէս մարգարտապարզ,  
ժիրանեգոյն վարագոյրներով ոսկեղէն  
կառքի մը վրայ բազմեալ, ձգեալ  
'ի կրկին սպիտակ ջրուոց, և պարփա-  
կեալ պարսկական իշխանի շքադէ-  
մը, և իրեն ընդ առաջ կուղար շքեղա-  
չուք կղերն 'ի գաւիթ մայրեկեղեցւոյն. և  
բոլոր այն արքունականաց, զինակրաց,  
լոկողէնցաց, պուստոսպալմարաց, տրուն-  
կարաց, գունգստապլից, ներքինի զօրա-  
պետաց, գող վարչաց, կաշառակործ  
ատենակալաց, անամթ պատրկաց,  
վատուէր ծերակուտից, դերեաց, լսեղ-  
կատակաց, դիպուածաբանից, ամե-  
նայն երկրէ վարձուորաց ումբոխը, բո-  
լոր այն պերճասէր խառնաղանձը, բո-  
լոր այն ոսկեզօծ փուռթիւնը՝ վեց հա-  
զար ստեղնաւոր աշտանակներէն լու-  
սաւորեալ միջավայրին մէջ կը թափէր  
քսանեօթն դուններէ, և կը սեմուէր  
դասին վանդակաց երկայնութեամբը,  
սիւնազարդ սրահից տակ և վերնա-  
տանց մէջ երթեկեցի մը, հերպայնծ  
գլխոց և ծիրանեղջյն փիլոնից աղմկա-  
լից ընդխառնում մը, ականակուռ  
գլխարկաց, ոսկեղէն մանեկաց, ար-  
ծաթեայ վահանաց շողջողուն մը, պա-  
տուադիր շարժուածոց փոխանակել մը,  
թեքմանց և ժպտելու հանդիպում մը,  
կերպասէ թիկնոցաց և շքոյ սուսերաց  
արուեստակեալ քարուամ մը, և մեղկ  
բուրում մը կը լեցընէր օդը. և վա-  
տասիրտ անհուն ամբոխ մը կամարնե-  
րը կը հնչեցընէր ցնծուկեան աղաղա-

կօք և անտուրք ծափահարութեամբք :  
 Մղկիթին մէջ լուսութեամբ քանի մը  
 պտոյտ ընեկէն ետքը, թողուցինք որ խօ-  
 սին մեր առաջնորդքը, որ սկսան ցուցը-  
 նել մեզի մատուռներն որոնք շինուած  
 էին սրահից տակ և կողպտուած ամե-  
 նայն բանէ, ինչպէս մայրեկեղեցւոյն  
 ուրիշ ամեն մասերն : Ոմանք գանձա-  
 տան կը ծառայեն, ինչպէս Պարթենո-  
 նի շէքին յետակողմը, յորս Տաճիկք  
 երբ կը մեկնին երկայն ճանապարհոր-  
 դութիւն մ'ընելու կամ երբ գուրբէ կը  
 վախնան, հօն կը զետեղեն իրենց դը-  
 բաններն և իրենց թանկագին ինքքը,  
 և նաև տարիներով հօն կը թողուն  
 Աստուծոյ պահպանութեան ներքեւ :  
 այլք, պատով մը փակուած, փոխեալ  
 են 'ի հիւանդանոց, յորում բժշկութեան  
 կամ մահուան կը սպասէ անբժշկելի  
 հիւանդ մը կամ տղէտ մը, որ երբեմն  
 լալագին աղաղակօք կամ տղայական  
 ծիծաղով կը հնչեցընեն մղկիթք : Հօս-  
 կէ տարին զմեզ միջովայրին մէջտեղն,  
 և յոյն թարգմանը սկսաւ պատմել մայր-  
 եկեղեցւոյն գարնանալիքը : Յիրաւի  
 ծրարիւր Անտուրքուս արալլացին և խի-  
 դորուս միլետացի ճարտարագետներէն  
 գծուեցաւ, այլ հրեշտակ մ'էր որ իրենց  
 ներշնչեց առաջին գաղափարը : Նոյն-  
 պէս հրեշտակ մ'եղաւ որ թելադրեց  
 Յուստինիանոսի եկեղեցւոյ կոնքին մէջ  
 երեք պատուհաններ բանալու, որ եր-  
 բորդութեան երեք անձինքը ներկայա-  
 ցընեն : Այսպէս եկեղեցւոյն հարիւր և  
 եօթն սիւններ կը ներկայացընեն այն  
 հարիւր և եօթն սիւններն որ վեր կը  
 վերցընեն իմաստութեան տունը : Շի-  
 նուածոյն կառուցման կարևոր նիւթերը  
 ժողովելու համար, եօթն տարի ծախե-  
 ցան : Հարիւր հիւսանց վարպետք աշ-  
 խատութեան վրայ կը հսկէին, և մի և  
 նոյն ժամանակ տասն հազար գործա-  
 ւորք կ'աշխատէին, հինգ հազար մէկ  
 կողմէն, հինգ հազար մէկալ կողմէն :  
 Դեռ քանի մը թիզ միայն գետնէն պա-  
 տերը բարձրացած էին, և արդէն չորս  
 հարիւր յիսուն կենդինար ոսկւոյ ծա-  
 խուած էր : Միայն շինուածոյն համար

բովանդակ ծախքը ելաւ քսան և հինգ  
 միլիոն լիւրա : Եկեղեցին Պատրիարզէն  
 օրհնուեցաւ հինգ տարի, մետասան ա-  
 միս և տասն որ առաջին քարը դնելէն  
 ետքը, և Յուստինիանոս հրամայեց այն  
 պատճառաւ պատարագներ, տօներ,  
 դրամոյ և ուտեստի բաշխումներ, որ  
 երկու շաբաթ տևեցին : Հօս խօսքն ա-  
 ռաւ տաճիկ գաւազը, և ակնարկեց մե-  
 զի այն խարխիւր որուն վրայ Մէհէմ-  
 մետ Բ սուլդանն, մտնելով յաղթական  
 'ի Սուրբ Սոփիա, ալ ձեռին արինւ-  
 ուուչա գրոյմը թողուց, իբրև իր աշխար  
 հակալութիւնը կնքելու համար : Յե-  
 տոյ ցըցուց Միհրապի մօտ ցուրտ պա-  
 տուռն կոչուածը, ուսկից շարունակ  
 զովային հով մը կը փչէ, որ ներշնչեց  
 ամենէն աւելի գեղեցիկ աղօթները իւ-  
 լամի մեծագոյն վարդապետաց : Տեսնել  
 տուաւ մեզի ուրիշ պատուհանի մը մէջ  
 նշանաւոր շողաշողուն քարը, որ թափ-  
 անցիկ մարմարիոնէ տախտակ մ'է,  
 որ բերեղի կտորի մը պէս կը փայլէ  
 երբ արևուն ճառագայթը վրան կը  
 զարնէ : Հիւսիսային կողմը դռնէն  
 մտնողին ձարակողմը, զպցընել տուաւ  
 մեզի քրտնոյ սեւան, որ պղնձապատ  
 սիւն մ'է որուն կիճը միշտ խօնաւ կը  
 տեսնուի պատենին փոքր պատառու-  
 ծէ մ'է : Եւ 'ի վերջոյ ցըցուց գոգա-  
 ւոր մարմարիոնի կտոր մը, բերեալ  
 'ի Բեթղէհէմէ, որուն մէջ կ'ըսուի թէ  
 այն ինչ ծնած գրուեցաւ Սիտի իւ-  
 սա «՝ որդին Մարիամու, առաքեալն  
 Աստուծոյ, հողին որ ելանէ 'ի նմանէ,  
 որ արժանի է պատուոյ և յայն և 'ի  
 հանդերձեալ աշխարհի ք : Եայց ինձի  
 երևեցաւ որ ոչ տաճիկն և ոչ յոյն շատ  
 կը հաւատային : Դեռ անգամ մ'ալ  
 խօսըն՝ առաւ թարգմանը, սրահից որ-  
 մած դրան մը դիմացէն անցնելու ա-  
 տեն, եպիսկոպոսին հուշակաւոր ա-  
 ռասպելը պատմելու համար, և այս  
 անգամ համուլման բարբառով մը խօսե-  
 ցաւ, որ եթէ անկեղծ չէր, աղէկ կեղ-  
 ծեալ էր : Այն վայրկենին յորում Տա-  
 ճիկը խուժեցին յեկեղեցին Սուրբ Սո-  
 փիա, յոյն եպիսկոպոս մ'աւազ խորա-

նը պատարագ կ'ըսէր. Տեսնելով զյար-  
ձակողըը, թողուց խորանը, սրահին  
վրայ ելաւ, և հալածուելով զինուոր-  
ներէն, աներևոյթ եղաւ այն փոքր  
դռնէն, որ անմիջապէս քարէ պատով  
մը փակուեցաւ. Չինուորը կատաղա-  
բար սկսան զարնել պատը. բայց մի-  
այն իրենց զինուց հետքը ձգեցին հօն.  
որմնադիրներ կանչուեցան, բայց ամ-  
բողջ օր մը մուրճեցնով և նիգբերով աշխա-  
տելէն վերջը, ետ կեցան ձեռնարկու-  
թենէն. ապա փորձեցին բոլոր կոստանդ-  
նուպօլսոյ որմնադիրք, և ամենքն հրա-  
շալի պատին դիմաց յանօգուտս պար-  
տասեալ ինկան: Բայց այն պատը պի-  
տի բացուի, պիտի բացուի այն օրն յը-  
րում պղծեալ մայրեկեղեցին զարձցի 'ի  
պաշտօն ֆրիստոսի, և այն ատեն պիտի  
ելլէ անկէ յոյն եպիսկոպոսն, իրեն  
քահանայապետական զգեստներն հա-  
բաժ, սկիհը ձեռքը, զուարթադէմ, և  
կլլելով խորանին աստիճաններէն, պի-  
տի առաջ տանի պատարագն այն կէ-  
տէն յորում թողուցեր էր, և այն օրը  
կոստանդիանոսի քաղաքին համար նոր  
գարուց արշալոյսը պիտի ծագէ:

Ելլելու ժամանակ, տաճիկ մկկիթա-  
պանը, որ մինչև այն ատեն ետևնէս ե-  
կեր էր երբեքելով և յօրանջելով, տուաւ  
մեզի ափ մը միսփոններու կտորուանք,  
որ քիչ մ'առաջ պատէ մը փրցուցեր  
էր, և թարգմանը դրան վրայ արձանա-  
նալով, Սուրբ Սոփիայի պղծուելուն  
պատմութիւնը սկսաւ, զոր իրեն բեր-  
ունէն կտրեցինք:

Բայց չեմ ուզեր որ այլք իմ բերնէս  
կտրեն զայն հիմա որ մայրեկեղեցւոյն  
նկարագրութիւնը այն տեսարանին ա-  
ռանձինն հանդամանքն յիս արծարծեց:

Հագիւ հազ առաւօտեան եօթին  
ժամանակներն Տաճկաց պարիսպներէն  
անցնելու լուրն տարածուած էր, ահա  
գին քաղմութիւն մ'ապաստաններ էր 'ի  
Սուրբ Սոփիա, որ էին իբրև հարիւր հա-  
զար անձինք՝ փախստական զինուորք,  
կրօնաւորք, քահանայք, ծերակոյտք,  
վանքերէ փախած հազարաւոր կու-  
սանք, պատրկական ընտանիք իրենց

զանձերովը, Տէրութեան մեծամեծ  
պատուակալք և իշխանք 'ի կայսերա-  
կան տանէ, որ սրահներուն և միջա-  
վայրին մէջէն կը վազէին, և կը խրո-  
նէին շինուածոյն բոլոր թաքստոցաց  
մէջ, խառնիխառն՝ ոսմկին, դերեոց,  
'ի բանտից և 'ի մետաղաց ժայթքելոյ  
չարագործաց խաժամուժից հետ, և բո-  
լոր մայրեկեղեցին կը հնչէր արհաւրաց  
աղաղակօք, ինչպէս ամբոխաժողով  
թատրոն մը հրդեհի մը բորբոքման  
ժամանակ, երբոր միջավայրը, բոլոր  
սրահները և բոլոր անդաստակները ի-  
ուրի խճկեցան, անջրպետեցին դռներն,  
և առաջին վայրկենից ժխորին՝ յաջոր-  
դեց զարհուրելի հանդարտութիւն մը:  
Շատերը դեռ կը կարծէին որ յաղթողը  
չէին համարձակեր պղծելու Սուրբ Սո-  
փիա եկեղեցին, այլք կը սպասէին միա-  
միտ ապահովութեամբ 'ի մարգարէից  
ազգեալ Հրեշտակին երևնալուն, որ  
բնաջինջ պիտի ընէր մուսուլմանեան  
բանակն՝ դեռ նախամարտաց կոս-  
տանդիանոսի սեան չհասած. այլք, մեծ  
գմբէթին չորս կողմի եղած տամալեաց  
վրայ ելած, վտանգին յառաջելը պա-  
տուհաններէ կը լրտեսէին, և ակնսոր-  
կութեամբք լուր կու տային հարիւր  
հազար մեռելատիպ երեսաց, որ սրահ-  
ներէն և միջավայրէն վեր կը նայէին:  
Վերէն կը տեսնուէր ահագին ճերմակ  
ամպ մը, որ Պլախերնիէն մինչև ցրտուռն  
ոսկեղէն կը ծածկէր պարիսպները. և  
պարիսպներէն առջին չորս փայլակնա-  
դէտ գիծեր, որ լուսայի չորս հեղեղաց  
պէս տանց մէջէն կը յառաջէին, ընդ-  
լայնելով և գուռալով, ծխոյ և բոցոյ մէջ:  
Տաճկական բանակին ասպատակող  
չորս թևերն էին, որ յունական բանա-  
կին անկարգ մնացուածը իրենց առ-  
ջէն կը հալածէին, և կը մօտենային  
կողոպտելով և այրելով դէպ 'ի Սուրբ  
Սոփիա, Զիարձակարանն և կայսերա-  
կան ապարանքը: Երբոր զօրաց յառա-  
ջամարտիկըը երկրորդ բլրոյն վրայ հա-  
սան, յեղապարծուց հնչեցին եկեղե-  
ցւոյն մէջ փողոց ձայնքը, և պակուցեալ  
բաղմութիւնը անկաւ 'ի ծուր: Բայց

նաև այն վայրկեաններուն , շատերը դեռ կը վտառահէին Հրեշտակին երևմանը և այլք կը յուսային որ յարգանաց և երկիրդի զգացում մը հրոտողքը պիտի կեցընէր Աստուծոյ նուիրեալ այն ահա-գին շինուածոյն վեհափառութեան ատ-լի: Այլ նաև այս վերջի պատրանքս չուշացաւ անհետ ըլլալու: փողոց գո-չիւնքը մօտեցան , զինուց և աղաղա-կաց խառնափնդոր շառաչիւն մը՝ հա-զար պատուհաններէն ներս հորդան տալով , լեցուց զմայրեկեղեցին , և վայր-կեան մը վերջը օամանեան տապարաց աստղին հարուածքը թնդացին անգաս տակաց պղնձակուռ դրանց վրայ: Այն ժամանակ այն անհուն ամբոխը մա-հուան ցուրտն զգաց , և ամենքն իրենք զիրենք Աստուծոյ յանձնեցին: Դռներն ջաղջխեալք կամ ելեալք ՚ի ծղխնեաց կործանեցան , և էլեխիչերեաց , սպայից , ռոնկաւորաց , տէրփիշներու , չավուշե-րու վայրենի խառնիճաղանջ մը , փո-չում և արեամբ զանգեալ , պատերազ-մի , հափափման և պղծութեան մուկգ-նութենէ այլափոխեալ , երեցաւ շեմին վրայ : Պաղպաջուն գանձիք մեծ միջա-վայրին տեսեանէն , զարմանաց և ցնծու-թեան բարձրաձայն աղաղակ մը փրցու-ցին . ապա կատաղի հեղեղի մը պէս ՚ի ներքս հրոսեցին: Մաս մը կուսանաց , տրկնանց , պատրկաց , թանկագին գե-րեաց վրայ յարձըկեցաւ , որոնք ապ-չած յերկիրդէ , անմիջապէս բազուկնին տուին չուանաց և չղթայից , այլք՝ եկե-ղեցւոյն ճոխութեանց վրայ թափեցան : Կողոպտեցան տապանակները , անդրիք տապալեցան , փղոսկրէ խաչելութիւնք ջաղջխեցան , գոհար կարծուած միւ-սինք վաղակաւորաց հարուածներէն քանդեալք՝ փայլփլուն անձրևով պարե-զօտից և բաց վեղարաց մէջ ինկան . ա-նօթոց մարգարիսները , դաշնակաց ծայ-

րերէն ջարդեալք , յատակին վրայ ու-տտատեցին հալածեալք իբրև կենդանի իբք , և խածուածքով և դանակով յի-րերաց յափշտակեալ . աւագ խորանն ոսկուոյ և արծաթոյ հազարաւոր կտու-րուանք եղաւ . բազմականներն , արծու-ներն , ամպիրոնն , դասին սինազարդ վանդակը իբրև քարէ հլուէ մը փը-չրեալք աներեղոյթ եղան : Եւ մի և նոյն ժամանակ չէին դադրէր յեկեղեցին գրոհ տալու , արինաշաղախ տարու-բերքով , ասիական ջոյիբքը . և քիչ ա-տենէն ուրիշ բան չի տեսնուիր բայց զլխապտոյտ աղմուկ մ՝ արբեցեալ ե-լուզակաց , խոյրով և քահանայական զգեստիք այլակերպեալ , որ օդուն մէջ սկիհներ և ճածանչներ կը տատա-նէին , քաջըշելով գերեաց բազմութիւն-ներ քահանայապետաց ոսկեգօծ գօտի-ներով կապած , աւարաբարձ ուղտոց և ձիոց մէջէն , որոնք կը կոխտոէին ար-ձաններու կտորներով , պատուտած ա-ւետարաններով և սրբոց նշխարներով լցեալ յատակին վրայ . խելացնոր և սեղանակապուտ սանդարմետական պաշտօն մը խառն ընդ սարսափելի աղմուկի յաղթական գոռմանց , սպաւ-նայեաց , խինջմանց , ծիծաղից , ալ-ջկանց ճից և փողոց հնչմանց հետ , ինչուան որ յանկարծակի ամենայն ինչ լռեց , և մեծագոյն դրան շեմին վրայ երեցաւ Մահմէտ Բ ձիաւոր , պար առեալ իշխանաց , վզրուկաց և սպա-րապետաց ամբոխու մը , խրոխտա-պանծ և անդեգևուէն իբրև Աստուծոյ վրէժխնդրութեան կենդանի պատ-կերն , և ասպանդակաց վրայ կան-գուն կեցած , որտապու ձայնով մը նոր կրօնից առաջին ձևն հնչեցուց ա-ւերեալ մայրեկեղեցւոյն մէջ . — Աս-տուած է լոյսն երկնից և երկրի :

Կը շարունակուի :